ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 47/09

Քաղ. Երևան 23 հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. հունվարի 23-ի նիստում (արձանագրություն № 67/4) քննարկեց Zott GmbH & Co.KG (DE) ընկերության ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է.Նահապետյանի կողմից ներկայացված 2008թ. դեկտեմբերի 22-ի բողոքը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ Zott GmbH & Co.KG (DE) ընկերության MONTE (IR 904764) բառային ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. սեպտեմբերի 23-ի իր որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15.1-ին և 98-րդ կետերի համաձայն MONTE (IR 904764) բառային ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում հայտարկված 29, 30 և 32-րդ դասերի ապրանքների նկատմամբ նախնական մերժման մասին որոշումը թողել է անփոփոխ՝ նույնատիպ ապրանքների համար DEL MONTE CORPORATION, State of New York (US) ընկերության անունով ավելի վաղ առաջնությամբ գրանցված DEL MONTE (ՀՀ վկ.N 2893) ապրանքային նշանի առկայության պատճառով, որի մեջ ամբողջությամբ ընդգրկված է ներկայացված նշանը:

Սակայն բողոքարկողը բողոքին կից ներկայացրել է հակադրված ապրանքային նշանի սեփականատեր DEL MONTE CORPORATION, State of New York (US) ընկերության կողմից Zott GmbH & Co.KG (DE) ընկերությանը տրամադրված նամակ-համաձայնագիրը առ այն, որ նա համաձայն է MONTE (IR 904764) ապրանքային նշանի գրանցմանն ու օգտագործմանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված 29, 30 և 32-րդ դասերի բոլոր ապրանքների համար: Ելնելով դրանից բողոքարկողը խնդրել է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և պահպանություն ընձեռել MONTE ապրանքային նշանի IR 904764

միջազգային գրանցմանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված դասերի բոլոր ապրանքների համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համարում է, որ գրանցման ներկայացված Zott GmbH & Co.KG (DE) ընկերության MONTE (IR 904764) ապրանքային նշանը ամբողջությամբ ընդգրկված է փորձաքննության կողմից հակադրված DEL MONTE CORPORATION, State of New York (US) ընկերության անունով նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ գրանցված DEL MONTE (ՀՀ վկ.N 2893) ապրանքային նշանի մեջ, հետևաբար կրկնական փորձաքննության 2008թ. սեպտեմբերի 23-ի որոշումը կայացվել է օրինական հիմքերով: Սակայն հաշվի առնելով նոր ի հայտ եկած հանգամանքը, այն է՝ հակադրված ապրանքային նշանի սեփականատեր DEL MONTE CORPORATION, State of New York (US) ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում MONTE (IR 904764) ապրանքային նշանի գրանցման և օգտագործման վերաբերյալ Zott GmbH & Co.KG (DE) ընկերությանը տրամադրված նամակ-համաձայնագիրը, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ վերացել են MONTE (IR 904764) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքում մերժելու հիմքերը:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել Zott GmbH & Co.KG (DE) ընկերության բողոքը ամբողջովին, չեղյալ ճանաչել MONTE (IR 904764) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 2008թ. սեպտեմբերի 23-ի կրկնական փորձաքննության որոշումը և MONTE (IR 904764) ապրանքային նշանի գրանցման գործողությունը տարածել Հայաստանի Հանրապետությունում՝ հայտարկված 29, 30 և 32-րդ դասերի ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան